2

Ավստրալիայում անտառային հրդեհներ են

4

ԱԺ պատգամավորներն ԱԻՆ-ում

5

Նոյեմբերի կլիմայական կանխատեսումը

7

Գիսաստղերի գաղտնիքները

ԱԻՆ
ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF EMERGENCY SITUATIONS OF RA

ISSN 1829-149X

ՈՒՂԻՂ ԿԱՊՈՎ՝ ՇՈՒՇԻԻՑ

Առաջին անգամ համատեղ ուսումնավարժություն Արցախում

Հոկտեմբերի 21-23-ը ՀՀ ԱԻ նախարարությունը եւ ԼՂՀ ԿԱ փրկարար ծառայությունը համատեղ անցկացրեցին խոշոր հրամանատարաշտաբային ուսումնավարժություն՝ «Շուշի շրջանում ուժեղ երկրաշարժի հետեւանքների վերացման միջոցառումների կազմակերպումը եւ իրականացումը» թեմայով:



ԼՂՀ Շուշի քաղաքում անցկացված ուսումնավարժության շրջանակներում Արցախ կատարած այցի ընթացքում ՀՀ ԱԻ նախարար Ա. Երիցյանն այցելեց Ստեփանակերտի օդանավակայան եւ ծանոթացել տեղի պայմաններին:

Վարժանքի 2-րդ օրը նախարարը Շուշիում ծավալված վրանային քաղաքում էր: Նա շրջեց վրանային քաղաքում, մտավ զորանոցներ, կառավարման կետ, դաշտային հոսպիտալ, իսկ այնուհետեւ դաշտային խոհանոցում ճաշեց փրկարարների հետ:

Ավելի ուշ, ուսումնավարժության ղեկավար կազմի ուղեկցությամբ, Ա. Երիցյանն շրջայց կատարեց նաեւ հարակից տարածքում ստեղծված 19 ուսումնական տեղամասեր (անտառային հրդեհ, փլուզված շինություն, քլորի արտահոսք, հրդեհաշիջում բազմաբնակարան շենքում, ջրամբարի փլուզում եւ այլն), որտեղ իրականացվելու էին ուսումնավարժության գործնական աշխատանքները:

Ուղիղ կապով՝ Շուշիից

Հոկտեմբերի 23-ին, ԱԻՆ ճգնաժամային կառավարման կենտրոնից ուղիղ կապ հաստատվեց Շուշի քաղաքի հետ:

Ուսումնավարժության ընթացքին հետեւելու նպատակով Շուշի քաղաքում էին ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը, ՀՀ եւ ԼՂՀ կառավարության անդամներ:

ԱԻՆ ճգնաժամային կառավարման կենտրոնից ՓԾ տնօրենի տեղակալ, գեներալ-մայոր Նիկոլայ Գրիգորյանը ուսումնավարժության ընթացքին հետեւող ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանին եւ ՀՀ ԱԻ նախարար Արմեն Երիցյանին զեկուցեց Հայաստանի տարածքում գրանցված արտակարգ պատահարների վերաբերյալ վերջին տվյալները:

ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, Շուշիում ձեւավորված վրանային քաղաքի կառավարման կետից ողջունելով հեռակապի մասնակիցներին, մասնավորապես ասաց.

- Քիչ հետո կավարտվի հրամանատարաշտաբային ուսումնավարժության երկրորդ փուլը: Ընդհանուր առմամբ շատ բարձր եմ գնահատում ուսումնավարժության ընթացքը եւ գրանցված արդյունքները: Նման ուսումնավարժություն առաջին անգամ է իրականացվում մեր երկու պետությունների, գերատեսչությունների համատեղ ուժերով: Եվ այսպիսի ուսումնավարժությունները, անշուշտ, նպաստում են ինչպես մեր երկրի անվտանգության ապահովմանը, այնպես էլ հզորացմանն ու շենացմանը: Մենք պայմանավորվել ենք ՀՀ ԱԻՆ-ի հետ աշխատանքներ սկսել ԼՂՀ փրկարար ծառայությունում ճգնաժամային կառավարման կենտրոն ձեւավորելու համար եւ կարծում եմ՝ մոտ ապագայում մենք հնարավորություն կունենանք նման ուղիղ կապ հաստատել Արցախի ճգնաժամային կառավարման կենտրոնից:

ՀՀ ԱԻ նախարար Ա. Երիցյանը, խոսելով ուսումնավարժության ընթացքի մասին, կարեւորեց համատեղ ուսումնավարժության անցկացումը երկու հանրապետությունների համար:

- Դրական եմ գնահատում ուսումնավարժության ընթացքը եւ կարծում եմ, որ մեր տղաները կարողացան կատարել իրենց առջեւ դրված խնդիրները, - նշեց ԱԻ նախարարը:

ԱԻՆ ՓԾ տնօրենի տեղակալ, գեներալ-մայոր Վ. Գաբրիելյանը Շուշիից ներկայացրեց ուսումնավարժության ընթացքի մասին վերջին տվյալները.

- Միջոցառումն ընթանում է նախատեսված մտահղացման համաձայն: Մասնակից արձագանքող ուժերը տեղակայված են Շուշիի տարածքում ծավալված վրանային քաղաքում: Բոլոր 19 ուսումնական տեղամասերում իրականացվում են գործնական աշխատանքներ: Այս ուսումնավարժությունը շատ լավ հնարավորություն է եւս մեկ անգամ ստուգել մեր կարողությունները եւ գնահատել կարիքները,- ավելացրեց Վ. Գաբրիելյանը:

Որպես կապուղի օգտագործվել էր ՀՀ ԱԻՆ գերատեսչական օպտիկամանրաթելային հենքի վրա ստեղծված ցանցը, որն իր մեջ ներառում է նաեւ ԼՂՀ Ստեփանակերտի Փրկարար ծառայությունը: Շուշիից Ստեփանակերտ օգտագործվել է Ղարաբաղ Տելեկոմ 3G գերարագ կապ, իսկ արտակարգ իրավիճակների հետախուզական նշանակության եւ մոնիթորինգի համար առաջին անգամ օգտագործվեց անօդաչու թռչող սարք:

Հեռակապի վերջում հանդիպմանը մասնակցող լրագրողները ստացան իրենց հուզող հարցերի պատասխանները:

Ուսումնավարժության վերջին օրը ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը եւ ՀՀ ԱԻ նախարար Արմեն Երիցյանը հետեւում էին ուսումնական տեղամասերում ծավալվող գործնական աշխատանքներին:

Փակման իր ելույթում ԼՂՀ նախագահը շնորհակալություն հայտնեց ՀՀ ԱԻ նախարարությանը՝ ի դեմս նախարար Ա. Երիցյանի՝ ընդգծելով, որ նման հայրենանվեր ու պրոֆեսիոնալ գործունեությունը մեծապես նպաստում է մեր երկրների հզորացմանը:

Բակո Սահակյանը մարտական զենքով պարգեւատրեց ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի տեղակալ, գեներալ-մայոր Վ. Գաբրիելյանին եւ ԱԻ նախարարի գլխավոր խորհրդական Օ. Ավանեսյանին՝ ծառայողական պարտականությունները բարեխիղճ կատարելու եւ ուսումնավարժության կազմակերպչական աշխատանքներին ցուցաբերած օժանդակության համար: Նախագահ Բ. Սահակյանի հրամանագրերով արժեքավոր նվերներ հանձնվեցին ուսումնավարժությանն աչքի ընկած մասնակիցներին:

ՀՀ ԱԻ նախարարը պատվոգրեր, ինչպես նաեւ «Համագործակցություն հանուն փրկության» եւ «Լավագույն հրշեջ-փրկարար» մեդալներ հանձնեց ուսումնավարժության ակտիվ մասնակիցներին, իսկ ԼՂՀ ԿԱ փրկարար ծառայության տնօրենը՝ պատվոգրեր եւ հուշանվերներ:

Ուսումնավարժության ավարտն ազդարարվեց վրանային քաղաքում կազմակերպված շքերթով:

Տես նաեւ էջ 3

ISSN 1829-149X
9 771829 149003 13037

ով իրազեկված է, նա զգաստացված է
արտակարգ թերթ
N 37 (500) 25.10.2013 -31.10.2013 www.emergency.am

ԱԻՆ
միացյալ հեռախոսահամարն է
911

Շնագայլ՝ կահույքի խանութում

Հոկտեմբերի 17-ին, ժամը 13.36-ին ահազանգ է ստացվել, որ Տավուշի մարզի Իջեւան քաղաքի Անկախության փողոցի թիվ 23 շենքի առաջին հարկում գտնվող կահույքի խանութում աղվես է նկատվել. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրշեջ-փրկարարները խանութում հայտնաբերել են շնագայլ, որին տեղափոխել են անվտանգ տարածք:

Այրվել է անասնագոմի տանիքը

Հոկտեմբերի 18-ին, ժամը 17.39-ին ահազանգ է ստացվել, որ Լոռու մարզի

Կուրթան գյուղում այրվում է պահեստավորված անասնակեր: Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 18.40-ին, մարվել՝ 20.30-ին:

Պարզվել է, որ 6-րդ փողոցի թիվ 19 տան բակում գտնվող անասնագոմի տանիքում այրվել է 200 հակ պահեստավորված անասնակեր եւ անասնագոմի տանիքը (24 քմ):

Հրդեհ «Բրավո» ռեստորանային համալիրում

Հոկտեմբերի 19-ին, ժամը 19.31-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Հր.Քոչար փողոցի թիվ 13 հասցեում գտնվող «Բրավո» ռեստորանային համալիրում հրդեհ է բռնկվել:

Դեպքի վայր են մեկնել երկու մարտական հաշվարկ եւ ՃԿԿ Ա՛ի արձագանքման խումբը: Հրդեհը մեկուսացվել է ժամը 19.58-ին, մարվել՝ 20.01-ին: Խոհանոցում այրվել են ծխահեռացման համակարգը եւ պատի երեսպատումը (1ք.մ):

Այրվել է տան տանիքը

Հոկտեմբերի 19-ին, ժամը 14.36-ին ահազանգ է ստացվել, որ Շիրակի մարզի

Գյումրի քաղաքի «Թուրքի մայլա» կոչվող թաղամասում այրվում է տուն: Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Պարզվել է, որ հրդեհը բռնկվել է Աթարբեկյան փողոցի թիվ 134 տան տանիքում: Հրդեհը մեկուսացվել է ժամը 15.28-ին, մարվել՝ 15.36-ին: Այրվել են Գ.Ս.-ին պատկանող տան տանիքի փայտյա կառուցատարրերը՝ 80 քմ:

Հրդեհ Հալաբյան փողոցում

Հոկտեմբերի 21-ին, ժամը 06.51-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Հալաբյան փողոցի թիվ 35 շենքի առաջին հարկի բնակարաններից մեկում ծուխ է նկատվում:

Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 07.13-ին, մարվել՝ 07.28-ին: Ամբողջությամբ այրվել է հյուրասենյակը գույքով՝ 22 քմ, իսկ բնակիչ՝ Ա. Պ.-ը (մոտ 40 տարեկան) տարբեր աստիճանի այրվածքներով հոսպիտալացվել է ՀՀ ԱՆ Ճառագայթային բժշկության եւ այրվածքների գիտական կենտրոն, որտեղ բժիշկները տուժածի առողջական վիճակը գնահատել են ծանր:

Հրդեհ Բուսաբանական այգում

Հոկտեմբերի 21-ին, ժամը 13.32-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Աճառյան փողոցում գտնվող Բուսաբանական այգում: Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 13.37-ին, մարվել՝ 13.47-ին: Այրվել է մոտ 500 քմ մակերեսով բուսածածկ տարածք եւ աղբ:

Փրկարարները իրականացրել են կառուցատարրերի ամրացման աշխատանքներ փաճարում

Հոկտեմբերի 22-ին, ժամը 10.25-ին Լոռու մարզային փրկարարական վարչության պետը տեղեկացրեց, որ իրենց է դիմել Գուգարաց թեմի առաջնորդ եպիսկոպոս Չ.-ն, որ Հաղպատի վանական համալիրի տաճարում ջահը կախելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել օպերատիվ խումբը: Հրշեջ-փրկարարները տաճարի գմբեթային մասում իրականացրել են

փայտյա կառուցատարրերի վրա մետաղյա կառուցատարրերի ամրացման աշխատանքներ:

Աշխատանքներին մասնակցել են նաեւ «Թեղուտ» ՓԲԸ-ի աշխատակիցները՝ տեխնիկայով եւ տեղի բնակիչներ: Աշխատանքները դադարեցվել են մթության պատճառով եւ կվերսկսվեն հոկտեմբերի 23-ի առավոտյան:

ՃՏՊ Վահագնի թաղամասի մոտակայքում

Հոկտեմբերի 21-ին, ժամը 19.38-ին ահազանգ է ստացվել, որ Երեւան-Աշտարակ ավտոճանապարհին՝ Վահագնի թաղամասի մոտակայքում, տեղի է ունեցել ՃՏՊ. կան տուժածներ, անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ եւ ՀՆ-ՓԱԻ կենտրոնի փրկարար ջոկատը: Պարզվել է, որ «Ֆորդ» մակնիշի 19OU341 պետհամարանիշով (վարորդ՝ 1980 թ. ծնված Գ. Թ.) ավտոմեքենան բախվել է «ՎԱԶ-2107» մակնիշի 90PP770 պետհամարանիշով ավտոմեքենային, վերջինս էլ բախվելով էլ. սյանը՝ շրջվել է: ՃՏՊ-ի հետեւանքով տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ են ստացել «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենայի վարորդ՝ մոտ 40 տարեկան անձը չպարզված տղամարդ, ում հրշեջ-փրկարարները տեղի ուժերի օգնությամբ դուրս են բերել ավտոմեքենայից եւ ուղեւոր՝ 1957 թ. ծնված Օ.Գ.-ը, ում արգելափակումից դուրս են բերել փրկարարները: Տուժածները տեղախոխվել են «Արմենիա» ԲԿ: Բժիշկները վարորդի առողջական վիճակը գնահատել են ծայրահեղ ծանր, իսկ Օ.Գ.-ի՝ միջին ծանրության:

Միջազգային լուրեր

Ավստրալիայում անտառային հրդեհներ են

Ավստալիայում արդեն մեկ շաբաթից ավելի է անտառային հրդեհներ են մոլեգնում: Տարերքից ամենաշատը տուժել է Նոր Հարավային Ուելս նահանգը, որտեղ արդեն այրվել է ավելի քան 200 տուն: Տե-

ղի իշխանությունները հորդորում են Կապույտ լեռների հազարավոր բնակիչներին տեղափոխվել երկրի առավել ապահով շրջաններ: Նահանգում արտակարգ դրություն է հայտարարված:

Վերջին տվյալներով՝ Նոր Հարավային Ուելս նահանգի անտառներում մոլեգնում են ավելի քան 60 անտառային հրդեհներ, որոնցից 13-ը անվերահսկելի են: Կրակի դեմ պայքարում է ավելի քան 1500 մարդ:

Հրշեջների գործը բարդացնում է ուժեղ շոգը եւ քամին, որի հետեւանքով կրակը նորանոր տարածքներ է գրավում: Որոշ շրջաններում կրակի բարձրությունը հասնում է 5 հարկանի շինության:

Հրդեհի հետեւանքով արդեն զոհվել է մեկ մարդ. տարեց ավստրալացին փորձել է կրակի ճիրաններից ազատել իր տունը, որի հետեւանքով սրտի կաթված է ստացել:

Թայլանդում ավտոբուսը գլորվել է անդունդը

Թայլանդի հյուսիսում գտնվող Լամպանգ նահանգում զբոսաշրջիկներով լի ավտոբուսը ընկել է 50 մետրանոց անդունդը, որի հետեւանքով զոհվել է 21 մարդ, 19-ը ծանր մարմնական վնասվածքներ են ստացել:

Ավտոբուսում 41 մարդ է եղել՝ ներառյալ վարորդը: Զբոսաշրջիկները բուդդայական ուխտավորներ են եղել, ովքեր Լամ-

պանգ նահանգից ուղեւորվում էին դեպի Չինագրայ՝ մասնակցելու բուդդայական արարողությանը:

Նախնական տվյալներով՝ վարորդը լավ ծանոթ չի եղել տեղի ճանապարհներին. ավտոբուսը շրջադարձի ժամանակ դուրս է եկել ճանապարհից եւ ընկել է անդունդը:

Չինաստանում մոտ 50 մարդ է վիրավորվել

Չինաստանում երկաթուղային վթար է տեղի ունեցել, որի հետեւանքով 1 մարդ զոհվել է, մոտ 50-ը տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ են ստացել: Պատահարը տեղի է ունեցել Չինաստանի հյուսիս-արեւմուտքում գտնվող Ցինհայ նահանգում. դատարկ ուղեւորատար գնացքը բախվել է մարդկանցով լի վագոններին:

Վիրավորներից 2-ի վիճակը ծանր է:

Կատարվում է դեպքի հետաքննություն:

Նիգերիայում խոլերայի համաճարակ է

Նիգերիայում շարունակվում է խոլերայի տարածումը, որի առաջին զոհերը ի հայտ էին եկել արդեն սեպտեմբերի սկզբին:

Ըստ պաշտոնական տվյալների՝ միայն վերջին շաբաթվա ընթացքում երկրում խոլերայից մահացել է 50 մարդ, գրանցված է հիվանդության 536 դեպք:

Բժիշկները նշում են, որ համաճարակի պատճառը մաքուր ջրի բացակայությունն է գյուղերում: Գյուղերի բնակիչները այն նույն ջուրն են օգտագործում խմելու համար, որից օգտնվում են նաեւ կենդանիները:

Մեքսիկայում կրկին փոթորիկ է

Մեքսիկայի խաղաղօվկիանոսյան ափերին գրոհած «Ռեյմոնդ» փոթորկը սկսել է կորցնել իր ուժը:

Մեքսիկայի ավելի քան 1000 բնակիչ

ստիպված է եղել լքել իր տունը «Ռեյմոնդ» փոթորկի հետեւանքով առաջացած ջրհեղեղների եւ սողանքների պատճառով:

Երկրի արեւմտյան 2 նահանգներում՝ Գուերրերո եւ Միչոական, տագնապի առավելագույն աստիճան է հայտարարվել: Տեղի իշխանությունները զինվորականների օգնությամբ տարհանել են բնակչությանը եւ տեղավորել ժամանակավոր կացարաններում: Բացի այդ, այս երկու նահանգներում փակվել են նավահանգիստները եւ դպրոցները:

«Ռեյմոնդը» թվով 8-րդ փոթորիկն է այս սեզոնին, որը գրոհել է Մեքսիկայի ափերը:

<<< 1



սեյսմիկ պաշտպանություն

Ս.թ. հոկտեմբերի 17-ից մինչեւ 23-ը ՍՊԾ-ի դիտացանցը Հայաստանի Հանրապետության տարածքում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցել է 6 երկրաշարժ, 6-ն էլ՝ Գյումրի քաղաքից դեպի հյուսիս-արեւելք ընկած տարածքում: Հոկտեմբերի 17-ին 3 բալանոց ստորգետնյա ցնցմանը ժամեր անց հաջորդել է 4 բալ ուժգնությամբ 2 երկրաշարժ, որոնք զգացվել են Արթիկ եւ Գյումրի քաղաքներում՝ 3 բալ ուժգնությամբ: Հաջորդ օրը նույն էպիկենտրոնային գոտում հետեւել է 3 սեյսմիկ իրադարձություն՝ 3, 3-4 եւ 4 բալ ուժգնությամբ, վերջինս զգացվել է Գյումրիում՝ 2-3 բալ ուժգնությամբ:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցվել է 11 երկրաշարժ: Դրանցից 8-ը (3-ից մինչեւ 5 բալ ուժգնությամբ) տեղի են ունեցել Թուրքիայի տարածքում՝ Վան քաղաքից դեպի հյուսիս գտնվող հատվածում: Հոկտեմբերի 17-ին Լեռնային Ղարաբաղի Քարվաճառ քաղաքից 13 կմ դեպի հարավ-արեւմուտք գտնվող էպիկենտրոնով երկրաշարժի ուժգնությունն էր 3 բալ: Հոկտեմբերի 21-ին 3 եւ 4 բալանոց ստորգետնյա ցնցումներ են գրանցվել Վրաստանի Դմանիսի քաղաքից 29 կմ դեպի հյուսիս-արեւելք եւ Իրանի Խոյ քաղաքից 24 կմ դեպի հյուսիս-արեւմուտք:

Տարածաշրջանից դուրս. 6.5 մագնիտուդով երկրաշարժ է տեղի ունեցել հոկտեմբերի 19-ին Կալիֆոռնիայի ծոցում՝ Ուատսոն քաղաքից 90 կմ դեպի հարավ-արեւմուտք: Երկրաշարժի հետեւանքով զոհեր եւ ավերածություններ չկան:

ՍՊԾ գործակալություն



եղանակի տեսություն

Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

Հանրապետության տարածքում

Հոկտեմբերի 25-26-ին, 28-29-ին սպասվում է առանց տեղումների եղանակ, 27-ին Վայոց ձորում եւ Սյունիքում սպասվում են տեղումներ: Քամին՝ հյուսիս-արեւմտյան՝ 2-5 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը հոկտեմբերի 25-ի գիշերը կնվազի 4-5, 26-ի ցերեկը եւ 27-ի գիշերը կբարձրանա 2-3 աստիճանով:

Օդի ջերմաստիճանը հոկտեմբերի 25-ի գիշերը կտատանվի լեռնային շրջաններում եւ Լոռիում՝ -2...-7, Սյունիքի նախալեռներում -3...+2, Արարատյան դաշտում -2..+2, Տավուշում 0..+5, Արագածոտնի նախալեռներում՝ 0...+3, Սյունիքի հովիտներում՝ +1...+6 եւ Արցախում +1...+5 աստիճանի սահմաններում:

Օդի ջերմաստիճանը հոկտեմբերի 25-ի ցերեկը կտատանվի լեռնային շրջաններում +9...+14, Լոռիում՝ +10...+15, Տավուշում +13...+17, Արագածոտնի նախալեռներում՝ +14...+17, Արարատյան դաշտում՝ +15... +18, Սյունիքի հովիտներում՝ +14...+18, Սյունիքի նախալեռներում՝ +10...+14 եւ Արցախում՝ +13...+16 աստիճանի սահմաններում:

Երեւանում՝

Հոկտեմբերի 25-29-ը սպասվում է առանց տեղումների եղանակ:

Օդի ջերմաստիճանը հոկտեմբերի 25-ի գիշերը սպասվում է՝ 0...+2, ցերեկը +16...+18 աստիճան տաքություն:

ԱԺ պատգամավորներն ԱԻՆ-ում

Հոկտեմբերի 18-ին Արտակարգ իրավիճակների նախարարություն էին այցելել Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողովի պատգամավորներ՝ հանձնաժողովի նախագահ Կորյուն Նահապետյանի գլխավորությամբ:

Այցի նպատակն էր ծանոթանալ ԱԻՆ գործունեությանն ու ձեռքբերումներին, Ճգնաժամային կառավարման կենտրոնի եւ 911 ծառայության աշխատանքներին:

ԱԻ նախարար Ա. Երիցյանի ուղեկցությամբ հյուրերը շրջեցին նախարարության վարչական շենքում, եղան Ճգնաժամային կառավարման կենտրոնում եւ 911 ծառայությունում, այցելեցին ԱԻՆ պոլիկլինիկա:

Ճգնաժամային կառավարման կենտրոնում ԱԺ պատգամավորներին հանգամանալից ներկայացվեցին կենտրոնի տեխնիկական հնարավորությունները, կիրառվող ծրագրերն ու աշխատանքային պայմանները:

ԱԻՆ խորհրդակցությունների դահլիճում նախարար Երիցյանը, շնորհակալություն հայտնելով պատգամավորներին այս նախաձեռնության համար, ներկայացրեց նախարարության վերջին ձեռքբերումները եւ առաջնահերթ ուղղություններով կատարվող ընթացիկ աշխատանքները:

- Այսօր Գառնիում կառուցում ենք միջազգային ստանդարտների սեյսմիկ դիտակայան, Բալահովիտում է տեղակայվելու հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնը, վերջերս մեզ հանձնվեց Ստեփանավանի օդանավակայանը՝ այնտեղ եւս իրականացնում ենք շինարարական աշխատանքներ, շարունակվում են աշխատանքները Լուսակերտի մեր ուսումնական բազայում: Ինչպես տեսնում եք, բոլոր ուղղություններով շարժվում ենք առաջ, - ասաց Արմեն Երիցյանը:

ԱԺ մշտական հանձնաժողովի նախագահ Կ. Նահապետյանը, շնորհակալություն հայտնելով ԱԻ նախարարին ջերմ ընդունելության համար, նշեց.

- Մեզ համար մեծ պատիվ է գտնվել Արտակարգ իրավիճակների նախարարությունում: ԱԻՆ-ի ձեռքբերումներն ակնառու են, իրականում կատարվել է հսկայածավալ աշխատանք, որի արդյունքները տեսանելի են ոչ միայն մեզ՝ խորհրդարանականներիս, այլ նաեւ ողջ հասարակության համար: Իմ գլխավորած հանձնաժողովը օրենսդրական գործունեություն է ծավալում պաշտպանության, անվտանգության, ոստիկանության եւ արտակարգ իրավիճակների ոլորտներում: Մենք արդեն արդյունավետ համագործակցում ենք Արտակարգ իրավիճակների նախարարության հետ, վերջերս քննարկել ենք պետական նյութական պահուստի, ինչպես նաեւ սեյսմիկ պաշտպանության մասին օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրինագծերը:

- Ցանկալի կլիներ մոտ ապագայում քննարկումներ կազմակերպել ԱԻ ոլորտի, մասնավորապես՝ փրկարար ծառայության համակարգի զարգացման վերաբերյալ: Նախատեսում ենք այցելել նաեւ ձեր նախարարության մարզային ստորաբաժանումներ, ուսումնասիրել առկա վիճակը եւ առաջարկություններ անել,- հավելեց Կ. Նահապետյանը:

Հանձնաժողովի անդամ, ԱԺ պատգամավոր Խաչատուր Քոքոբելյանն իր խոսքում նշեց.

- Շատ քիչ կառույցներ կան, որտեղ առաջին իսկ քայլից տեսնում ես, որ կայացած կառույց է՝ հստակ քաղաքականությամբ: Արտակարգ իրավիճակների նախարարությունն այդ կառույցներից է: Մամուլում եւ հեռուստատեսությամբ ամեն օր ականատես ենք լինում, որ ձեր աշխատակիցները մարդկանց կողքին են գտնվում: Այսօր տպավորությունս այնպիսին էր, որ գտնվում եմ զարգացած որեւէ եվրոպական երկրի փրկարարական կառույցում: Եվ ես ուրախ եմ, որ այս ամենը տեսնում եմ մեր երկրում:

- Անկախ կուսակցական պատկանելությունից, մենք բոլորս մեկ գործ ենք անում ու կարծում եմ, որ անելիքներ դեռ շատ կան: Շնորհակալ եմ ձեր գնահատականի համար, շնորհակալ եմ, որ մեր կողքին ենք,- եզրափակեց նախարար Երիցյանը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին աղետների ռիսկի նվազեցման գործոնը զարգացման ծրագրերում ներառելու, ԱԻՆ գույքի եւ տեխնիկական միջոցների ձեռքբերման, կադրերի հոսունության խնդիրները:

Միջազգային եռակողմ համագործակցություն

Հոկտեմբերի 22-ին Արտակարգ իրավիճակների նախարարությունում տեղի ունեցավ սեմինար, որը կազմակերպել էր ԱԻՆ «Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» գործակալությունը:

Սեմինարին մասնակցեցին ՀՀ ԱԻՆ Սեյսմիկ պաշտպանության ծառայության փորձառու եւ երիտասարդ մասնագետներ, ինչպես նաեւ արտերկրից փորձի փոխանակման նպատակով Հայաստան ժամանած հյուրեր. Բուլղարիայի ԳԱ Տիեզերական հետազոտությունների եւ տեխնոլոգիաների ինստիտուտից՝ բաժնի վարիչ, պրոֆ. Կատյա Գեորգիեւան, դ-ր Բոյան Կիրովը եւ դ-ր Սեմյոն Ասենովսկին, եւ Լեհաստանի ԳԱ Երկրաֆիզիկայի ինստիտուտից՝ տնօրեն, պրոֆ.Պավել Ռովինսկին եւ Սեյսմոլոգիայի ու Երկրի ֆիզիկայի դեպարտամենտի վարիչ պրոֆ. Ստանիսլավ Լասոցկին:

Սեմինարի ընթացքում ներկայացվեցին մի շարք զեկույցներ, այդ թվում՝ «Արեգակի ակտիվության եւ երկրաշարժերի միջեւ կապը»՝ Կ.Գեորգիեւա, «Լեհաստանի ԳԱ Երկրաֆիզիկայի ինստիտուտի կառուցվածքը եւ գործառույթները»՝ Պ.Ռովինսկի, «Երկրաֆիզիկայի ինստիտուտի Սեյսմոլոգիայի ու Երկրի ֆիզիկայի դեպարտամենտի ուսումնասիրությունները երկրորդային սեյսմիկ վտանգի գնահատման ուղղությամբ»՝ Ս.Լասոցկի:

ՍՊԾ պետ Հ.Պետրոսյանը հյուրերին ներկայացրեց, ՀՀ ԱԻՆ Սեյսմիկ պաշտպանության ծառայության ձեռքբերումները եւ գերակա խնդիրներըե թեմայով զեկույց:

Զեկուցումների շուրջ ծավալված քննարկման արդյունքում որոշվեց զարգացնել եւ ընդլայնել կապերը սեյսմիկ անվտանգության ապահովման ոլորտում ՀՀ ԱԻՆ Սեյսմիկ պաշտպանության ծառայության, Բուլղարիայի եւ Լեհաստանի Գիտությունների ակադեմիաների միջեւ:

Համալրվում են ԱԻՆ շարքերը

Հոկտեմբերի 18-ին ՀՀ ԱԻ նախարար Ա. Երիցյանի հրամաններով 12 նոր նշանակում է եղել ՀՀ ԱԻՆ ՓԾ ծառայության կազմակերպման, փրկարարական ուժերի, կադրերի վարչություններում եւ Արագածոտնի, Շիրակի ու Արարատի մարզային կառույցներում:

Հերթական կոչումներ

Նախարար Ա. Երիցյանը հերթական կոչումներ է շնորհել ՀՀ ԱԻՆ ՓԾ փրկարարական ուժերի վարչության, ինչպես նաեւ Արմավիրի, Շիրակի, Արագածոտնի, Արարատի մարզային ստորաբաժանումների 6 աշխատակցի:

Մասնագետի անկյուն

Նոյեմբերի կլիմայական բնութագիրը եւ կանխատեսումը

Նոյեմբերին շարունակում է փոքրանալ արեգակի բարձրությունը հորիզոնից եւ հետեւաբար ցերեկվա տեւողությունը: Արեւափայլի տեւողությունը հանրապետության տարածքում ամսվա ընթացքում կազմում է 120-160 ժամ, պարզ օրերի թիվը զգալիորեն պակասում է (5-6օր), ամսական միջին ջերմաստիճանը 1.5°C է:

Համեմատաբար տաք է նոյեմբերի առաջին տասնօրյակը (տասնօրյակային միջին ջերմաստիճանը՝ 4°C): Երկրորդ տասնօրյակի վերջին լեռնային առանձին շրջաններում տեղի է ունենում ջերմաստիճանի անցում 0°C-ից ցածր, որը բնորոշում է ձմռան սկիզբը: Նոյեմբերի երրորդ տասնօրյակի միջին ջերմաստիճանը հանրապետությունում բացասական է՝ -0.5°C: Ամենաբարձր ամսական միջին ջերմաստիճանը գրանցվում է Մեղրիում՝ 9.5°C, այն բարձր է նաեւ հյուսիս-արեւելքում (Բագրատաշեն՝ 6.9°C, Իջեւան՝ 7.1°C), Արարատյան դաշտում (Երեւան 6.5°C, Արմավիր 5.6°C): Առավելագույն ջերմաստիճանը այդ շրջաններում հասնում է մինչեւ 22-30°C: Ամսական միջին ջերմաստիճանը ցածր է 2000մ-ից բարձր շրջաններում (Աշոցք՝ -1.8°C):

Նվազագույն ջերմաստիճանը լեռնային առանձին շրջաններում հասնում է -27°C (Աշոցք, Գավառ, Սիսիան), Արմավիրում՝ -17°C, Մեղրիում՝ -7°C: Երեւանում նոյեմբերին ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է 1948թ.՝ -17°C:

Նոյեմբեր ամսին առավել տաք եղանակ է դիտվել 1966, 1970, 1998թթ.: 1973, 1978, 1996, 2001թթ. հանրապետությունում գրանցվել են խիստ ցածր ջերմաստիճան, հովտային շրջաններում նվազագույն ջերմաստիճանը հասել է -6…-12°C:

Տեղումների քանակը հոկտեմբերի համեմատ պակասում է եւ կազմում միջինը՝ 41մմ: Ավելի շատ տեղումներ դիտվում են լեռնային շրջաններում՝ 60մմ, իսկ ամենից քիչ Արարատյան դաշտում՝ 20-30մմ: Տեղումնառատ են եղել 1973, 1986, 1994 թվականները, երբ տեղումների քանակը գերազանցել է նորման 2-3 անգամ: Սակայն եղել են չորային տարիներ 1996թ., 2010թ., երբ նոյեմբերին ընդհանրապես տեղումներ չեն դիտվել:

Ամսվա կեսերին հանրապետության բարձր լեռնային շրջաններում առաջանում է կայուն ձյան ծածկ (ձյան շերտի բարձրությունը հասնում է 5-10սմ): Առանձին տարիներին այն արդեն առաջանում է ամսվա սկզբին:

Նոյեմբերին հանրապետության ամբողջ տարածքում առաջանում է բարձր ճնշման դաշտ եւ հաստատվում է քամու ձմեռային ռեժիմ՝ գերակշռում է անդորրը, միայն բարձր լեռնային շրջաններում եւ լեռնանցքներում քամու արագությունը մեծանում է, միջինը հասնելով մինչեւ 5-7մ/վրկ, իսկ առավելագույնը՝ 20-30 մ/վրկ (Պուշկինի լ/ք, Սիսիանի լ/ք):

Նոյեմբերին կտրուկ մեծանում է մառախլապատ օրերի թիվը, հատկապես լեռնանցքներում՝ 25 օր: Մառախուղ առավել հաճախ դիտվում է առավոտյան ժամերին:

Արարատի եւ Արմավիրի մարզեր, Արագածոտնի նախալեռներ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է +5...+6°C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրեր հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը մինչեւ +18...+20°C, ամսվա երկրորդ կեսին հնարավոր է ջերմաստիճանի նվազում՝ գիշերը մինչեւ -2...-7°C: Ամսական տեղումների քանակը ենթադրվում է բազմամյա միջին քանակից ավել (նորման 18-25 մմ):

Շիրակի, Կոտայքի եւ Գեղարքունիքի մարզեր, Արագածոտնի մարզի լեռնային շրջաններ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է -2...+2°C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրեր հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը՝ մինչեւ +10...+14°C, ամսվա երրորդ տասնօրյակում՝ ջերմաստիճանի նվազում գիշերը մինչեւ -10...-15°C: Ամսական տեղումների քանակը ենթադրվում է



բազմամյա միջին քանակից ավել (նորման 30-50մմ):

Լոռու մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է +3...+5°C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրերի հնարավոր է ջերմաստիճանի բարձրացում ցերեկը մինչեւ +15...+17°C, երրորդ տասնօրյակում՝ ջերմաստիճանի նվազում՝ գիշերը մինչեւ -10...-15°C: Ամսական տեղումների քանակը ենթադրվում է բազմամյա միջին քանակից ավել (նորման 30-35 մմ):

Տավուշի մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է +5...+7°C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրեր հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը՝ մինչեւ +15...+20°C, երրորդ տասնօրյակում՝ ջերմաստիճանի նվազում՝ գիշերը մինչեւ -2...-7°C: Ամսական տեղումների քանակը ենթադրվում է բազմամյա միջին քանակից ավել (նորման 35-40մմ):

Վայոց Ձորի մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը նախալեռնային շրջաններում սպասվում է +6...+7°C, լեռնային շրջաններում՝ +1...+2°C, որը մոտ է բազմամյա միջին արժեքներին: Առանձին օրեր հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը՝ նախալեռնային շրջաններում մինչեւ +17...+20°C, լեռնային շրջաններում՝ +10...+14°C, ամսվա երրորդ տասնօրյակում հնարավոր է ջերմաստիճանի նվազում՝ նախալեռնային շրջաններում գիշերը մինչեւ -2...-5°C, լեռնային շրջաններում՝ -7...-120C: Ամսական տեղումների քանակը ենթադրվում է բազմամյա միջին քանակից ավել (նորման 23-53մմ):

Սյունիքի մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է հովտային շրջաններում +8...+10°C, նախալեռնային շրջաններում՝ +4...+6°C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրեր հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը հովտային շրջաններում մինչեւ՝ +18...+23°C, նախալեռնային շրջաններում +15...+18°C, երրորդ տասնօրյակում՝ օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը հովտային շրջաններում մինչեւ՝ -2...+2°C, լեռնային շրջաններում՝ -2...-7°C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ հովտային շրջաններում՝ -2...-4°C, նախալեռնային շրջաններում՝ -4...-7C, առավելագույնը՝ հովտային շրջաններում +29...+30°C, նախալեռնային շրջաններում՝ +23...+24°C): Ամսական տեղումների քանակը սպասվում է բազմամյա միջին քանակից ավել (նորման՝ հովտային շրջաններում 20...40մմ, նախալեռնային շրջաններում 45...51 մմ):

Երեւան քաղաք

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է +5...+6°C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին (նորմա՝ +6.6°C): Առանձին օրերի հնարավոր է ջերմաստիճանի բարձրացում մինչեւ՝ +18...+20°C, ամսվա երկրորդ կեսին ջերմաստիճանի նվազում՝ գիշերը մինչեւ -5...-7°C: Ամսական տեղումների քանակը ենթադրվում է բազմամյա միջին քանակից ավել (նորման՝ 30մմ):

Լ.ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱԻՆ Հիդրոմետ ծառայության տնօրեն

Տարերային աղետներ. ինչպե՞ս վերականգնվել սթրեսից հետո

Աղետներն այսօր ամենուրեք են: Դրանք կարող են լինել բնական, ինչպես, օրինակ, երկրաշարժերը, ջրհեղեղները, անտառային հրդեհները, փոթորիկները կամ տոռնադոները, եւ մարդու գործունեության հետեւանք՝ ինչպես դժբախտ պատահարներն աշխատավայրում կամ հրդեհները բնակարաններում, կամ էլ՝ օրինակ, ահաբեկությունները:

Աղետներ վերապրածներին օգնող հոգեկան առողջության մասնագետների դիտարկումները ցույց են տվել, որ հետեւյալ քայլերն օգնում են նվազեցնել սթրեսային ախտանշանները եւ նպաստում են հետաղետային արագ վերականգնմանը.

• Պաշտպանություն. գտնել այնպիսի մի ապաստան, որտեղ կլինի սնունդ եւ ջուր, սանիտարահիգիենիկ պայմաններ, մեկուսանալու հնարավորություն, երբ կարելի է հանգիստ նստել, թուլանալ կամ քնել:

• Նպատակ. սկսել աշխատել անձնական կամ ընտանեկան առաջնահերթ խնդիրների լուծման ուղղությամբ, ինչը կօգնի ձեզ ու ձեր սիրելիներին պահպանել կամ վերագտնել հույսը, ձգտումները կամ ինքնահարգանքը:

• Հարաբերություններ. հաստատել կամ վերահաստատել կապերն ընտանիքի, հասակակիցների եւ բարեկամների հետ՝ աղետի ենթարկվելու ձեր փորձի մասին խոսելու համար: Փրկվածները միշտ ուզում են հնարավորություն ունենալ՝

«պատմելու իրենց պատմությունները» նրանց, որոնք հետաքրքրված են եւ անհանգստանում են, ինչպես նաեւ կարողանան լսել ուրիշներին, երբ նրանք պատմում են իրենց մասին: Դա օգնում է, թեկուզ կարճ ժամանակով, թեթեւացնել սթրեսը:

• Ընտրություն. որոշել հիմնական ռեսուրսները, ինչպիսիք են Արտակարգ իրավիճակների նախարարությունը, Կարմիր խաչը եւ այլն, տեղի բժշկական հաստատությունը՝ արտակարգ իրավիճակներում նախնական օգնություն, առողջապահական ծառայություններ եւ ընդհանուր աջակցություն ստանալու համար:

Ամեն օրը նոր հնարավորություն է տալիս դեպի առողջացում եւս մեկ քայլ անելու համար: Աղետի ենթարկված մարդիկ պետք է.

• Կենտրոնանան նրա վրա, ինչն ամենակարեւորն է իրենց եւ իրենց ընտանիքի համար տվյալ պահին:

• Փորձեն հասկանալ, թե ինչ է տեղի ունենում իրենց եւ իրենց սիրելիների հետ, որը կօգնի հիշել, թե ինչն է կարեւոր:

• Հասկանալ, թե ինչ է նշանակում այդ փորձը՝ որպես իրենց կյանքի մի մաս, որպեսզի կարողանան շարունակել ապրել եւ նույնիսկ՝ աճել որպես անհատ:

• Հոգալ սեփական մարմնի մասին՝ պարբերաբար մարզվել, լավ սնվել եւ քնել, որը կօգնի նվազեցնել սթրեսն ու կանխել հիվանդությունները:

• Աշխատել մյուսների հետ՝ համայնքում պայմանները բարելավելու համար, օգնել նրանց, ովքեր մեկուսացել են:

Ինչպե՞ս հասկանալ, որ մասնագիտական օգնության կարիք ունեք:

Աղետներից փրկվածներից շատերն, այդ փորձի շնորհիվ, ավելի են ուժեղանում՝ նրանց հոգեկան հնարավորություններն աճում են: Այնուամենայնիվ, ոմանք հայտնվում են այնպիսի մի հոգեվիճակում, որն անհանգստացնում է իրենց: Դա լինում է հատկապես այն դեպքերում, երբ աղետի մեղավորը մեկ այլ մարդ է եղել:

Կարող են հանդիպել հետեւյալ հիվանդագին ռեակցիաները.

• Դեպքի կպչուն հիշողություններ (մղձավանջներ, տեսողական զուգորդումներ)

• Անհանգստացնող հիշողություններից ազատվելու անառողջ փորձեր (թմրանյութերի, ալկոհոլի օգտագործում)

• Զգացմունքների լրիվ ընդարմացում (զգացմունքներ ունենալու անկարողություն, դատարկության զգացողություն)

• Շարունակական գերգրգռվածություն

• Ուժեղ տագնապ (կաթվածահար անող անհանգստություն, անօգնականություն)

• Դեպրեսիա (էներգիայի, հետաքրքրության, ինքնագնահատականի կորուստ)

• Կյանքի իմաստի ու հույսի կորուստ

• Երկարատեւ զայրույթ կամ կատաղություն

• Դիսսոցիացիա (անիրականության կամ երազի մեջ գտնվելու զգացում, հիշողության կորուստներ):

Եթե աղետից որոշ ժամանակ անց այս նորմալ համարվող ռեակցիաները դանդաղորեն չեն անցնում, այլ գնալով խորանում են, ապա այս դեպքում արդեն մասնագիտացված օգնություն է պետք: Նրանք, ովքեր ուզում են վերջնականապես ազատվել այս ախտանշաններից, պետք է դիմեն մասնագետի, որն աշխատում է տրավմաների եւ աղետների ենթարկված մարդկանց հետ:

հոգեբանի սենյակ

Եկեք բարի լինենք

Բարություն... մի բառ, որն այսօր կորցրել է իր իսկական նշանակությունը: Թվում է, թե բարի լինելն այսօրվա կյանքի պահանջներին ոչ համապատասխան մի երեւույթ է: «Բարի լինելը հիմարություն է», - այսպես են կարծում շատերը, քանի որ մարդիկ չեն կարողանում կյանքում հաջողության հասնել բարի լինելով: Այսինքն՝ հաջողության հասնելը զուգորդվում է եթե ոչ չարության, ապա՝ դաժանության հետ, քանի որ այլ կերպ հնարավոր չէ: Չարություն, դաժանություն, նախանձ եւ նման շատ այլ վատ բաներ կան մեր կյանքում, սակայն իրականում մեզանից յուրաքանչյուրն իր հոգու խորքում՝ գիտակցաբար կամ անգիտակցաբար, ցանկանում է, որ «աշխարհը լինի բարի»: Ուզում ենք, որ մեր դիմացինը լինի անկեղծ ու բարի, ուզում ենք հույսը դնել ոչ միայն մեզ վրա, այլեւ՝ ուրիշի, ուզում ենք նվիրվել առանց հետին մտքերի: Հարց է առաջանում՝ ի՞նչն է խնդիրը, որ մարդիկ իրենց բարությունը կյանքում չեն դրսեւորում: Փորձենք հասկանալ այդ պատճառները եւ գտնենք դեպի իսկական՝ հոգու խորքից բխող, բարություն տանող ուղին:

Բարի լինելը դժվար է

Պատճառներից մեկն այն է, որ մենք կարծում ենք, թե մյուսները չար են, քանի որ ոչ միշտ են սիրալիր ու բարեհամբույր մեզ հետ: Իրականում մարդկանց նման պահվածքն ավելի շատ պաշտպանական մեխանիզմ է կամ ամաչկոտության հետեւանք: Բավական է նայենք ինքներս մեզ հայելու մեջ եւ կհասկանանք, որ մենք էլ ենք դիմակ կրում միջավայրում: Մանուկ հասակում ծնողները մեզ սովորեցնում են սիրալիր լինել դիմացինի նկատմամբ, լավ պահել օտար միջավայրում եւ այլն: Այդ ամենն արմատանում է մեր մեջ եւ շարունակում է արտահայտվել արդեն հասուն տարիքում: Բարի լինելու դժվարություններից է նաեւ այն, որ շատ հաճախ մենք ռիսկի ենք դիմում, երբ ուզում ենք մեկին օգնել, եւ արդյունքում մեզ սխալ են հասկանում: Լինում են դեպքեր, որ մեր բարությունը չարաշահում են, եւ մենք հայտնվում ենք հիմար իրավիճակում:

Ներքին ընտրություն

Հոգեվերլուծության տեսանկյունից մարդու համար ավելի հեշտ է չար լինել, քան՝ բարի: Չարությունը տագնապի եւ հիասթափության մասին է վկայում: Մենք վախենում ենք, որ դիմացինը կնկատի մեր խոցելի լինելը: Չար մարդիկ իրականում ոչ բավարարված են եւ ոչ էլ գոհ են իրենց կյանքից: Բացասական հույզերի միջոցով նրանք ազատվում են իրենց ներքին անբավարար վիճակից: Չարությունը բավական «ծանր» է նստում անձի վրա, քանի որ իրականում քայքայում է մարդու հոգեկան ռեսուրսները: Իսկ բարությունը, ընդհակառակը, ներքին ուժի եւ ներդաշնակության ցուցանիշ է: Բարի լինելու համար առաջին հերթին պետք է մարդը կապ հաստատի ինքն իր հետ, իր «Ես»-ի հետ: Չար մարդը հեռացել է իրենից: Եթե մարդն ունի ոչ բավարար ինքնագնահատական, ինքնահարգանք, ապա նա չի կարող բարի լինել: Այդ իսկ պատճառով ինքնավերլուծությունը, սեփական անձին մոտ լինելը դեպի բարություն տանող ուղիներից մեկն է:

Կենսաբանական օրենք

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարդն ընդունակ է հասկանալ դիմացինին (էմպաթիա ցուցաբերել) արդեն ծնված օրվանից, քանի որ երբ նորածինը լսում է այլ երեխայի լացը, ինքն էլ է սկսում լաց լինել: Էմպաթիան մեզ անհրաժեշտ է մեր գոյության համար, այդ իսկ պատճառով բնությունը մեզ պարգեւել է այդ հատկությունը: Ինչու այն երկար չի պահպանվում: Այստեղ մեծ է ծնողների եւ դաստիարակության դերը: Երբ երեխան սկսում է նմանակել ծնողներին, բարի է լինում, եթե ծնողները բարի են, եւ չար՝ եթե նրանք էլ են չար: Հուզական պաշտպանվածությունը, ֆիզիկական եւ հոգեկան բարվոքությունը մանկության տարիքում երեխայի մեջ բարություն են զարգացնում: Երբ ընտանիքում, դասարանում չկան շատ սիրելիներ կամ մերժվածներ, եւ բոլորին միանման են սիրում, երեխաները բարի են մեծանում:

Վարժություն. «Լինենք Բարի»

Եկեք խոստովանենք, որ կյանքը կարող է ավելի լավը լինել ինչպես մեզ համար, այնպես էլ ուրիշների: Եկեք այսօրվանից սկսենք ի սրտե բարի լինել: Այստեղ ներկայացված են մի շարք գործողություններ, որոնք ձեզանից յուրաքանչյուրը կարող է իրականացնել: Դուք կարող եք ինքներդ էլ գտնել ձեր տարբերակները.

- Զանգահարեք ձեր ընկերուհուն կամ ընկերոջը, որին երկար ժամանակ չեք հանդիպել
- Ձեզ համար ոչ պետքական իրերը, խաղալիքները հավաքեք եւ նվիրեք մանկատանը, կամ ձեր շրջապատում գտնող մարդկանց, ովքեր դրա կարիքն ունեն
- Սիրալիր եղեք երթուղայինի վարորդի հետ
- Հանդիպեք ձեր մտերիմներին
- Այցելեք ձեր տատիկին, պապիկին, որոնց վաղուց չեք տեսել

Ցուցակը կարելի է անվերջ շարունակել:

Բարության նախապայմանները

Փիլիսոփա եւ հոգեբան Պիեռռ Ֆերուչին նշում է, որ բարությունն ունի տարբեր սահմաններ

- **էմպաթիա.**

երբ փորձում ես իսկապես հասկանալ, թե ինչ է կատարվում քո բարկացած ընկերոջ հետ: Նրան ագրեսիվ կերպով պատասխանելու փոխարեն, մենք կարող ենք իրականում նրա հետ հանգիստ խոսել

- **Համակերպում.**

սեփական անձը, ընտանիքը, ընկերական շրջապատը գովերգելու փոխարեն, ավելի լավ է ցուցաբերել համեստություն եւ իսկապես լսել, թե դիմացինն ինչ է ուզում ձեզ ասել

- **Համբերություն.**

փորձեք համբերատար լինել բոլոր իրավիճակներում

- **Մեծահոգություն**
- **Հարգանք դիմացինի նկատմամբ.**

հարգեք ձեր զրուցակցին, եթե նույնիսկ ձեր հայացքները տարբեր են: Առանց հարգանքի բարությունը մակերեսային է:

- **Հավատարմություն.**

հավատարիմ եղեք ձեզ եւ ձեր խոսքին

- **Երախտագիտություն.**
- **Շնորհակալ եղեք, որ դուք առողջ եք, որ ձեր հարազատները ձեր կողքին են, որ դուք ունեք այն, ինչ հիմա ունեք**

Չարության բնույթը

Մեզ հաճախ թվում է, թե մեզ շրջապատում են չար, տհաճ, մեզ վնասել ցանկացող մարդիկ: Սակայն եթե ուշադիր ուսումնասիրեք ձեր հարաբերությունները, ապա կտեսնեք, որ դրանք իրականում չեզոք հարաբերություններ են եւ բավական հաճելի:

Բոլորիս կյանքում էլ լինում են դեպքեր, երբ մենք դառնում ենք չար: Օրինակ՝ դեռահասության տարիքում դաժանության նկատմամբ հակվածությունը ինքնահաստատման միջոց է: Որպեսզի այդ բացասական շրջանն արագ եւ հեշտ հաղթահարվի, անհրաժեշտ է, որ դեռահասն իրեն ապահով զգա եւ չվախենա ապագայից: Եթե չկա հեռանկար, հավատ ապագայի նկատմամբ, ապա երեխայի մեջ չարությունը եւ դաժանությունը կարող են բնավորության գիծ դառնալ: Քանի որ նա պետք է պայքարի իր գոյության համար՝ դաժանությունը դառնում է օրինաչափ:

Բարությունը վարակիչ է

Մեզանից յուրաքանչյուրն իրականում ուզում է լինել բարի եւ նույն վերաբերմունքն էլ սպասում է դիմացինից: Ինչքան էլ չարությունը շատ է մեր կյանքում, եթե ուշադիր նայենք, ապա կտեսնենք, որ բարությունն էլ է շատ: Ընկերական հարաբերություններ, բարեգործական ծրագրեր, ստեղծվում են կազմակերպություններ, որոնք հոգ են տանում անօթեւան մարդկանց, կենդանիների մասին, ապահովում են սննդով, հագուստով, բնակության վայրով եւ այլն: Թվարկածները դեռ շատ քիչ են՝ մեր կյանքում բարություն իսկապես կա, պարզապես պետք է այն նկատել: Ինչքան բարությունը շատ լինի մեր կյանքում, այնքան կշահենք բոլորս:

Մեզանից յուրաքանչյուրի մեջ էլ կա բարություն: Բավական է մի փոքրիկ բարի ժեստ, հաճոյախոսություն անել, ժպտալ ավտոբուսի վարորդին, օգնել տատիկին անցնել փողոցը եւ այլն: Ագրեսիային ագրեսիայով մի պատասխանեք, բղավոցին էլ՝ բղավոցով, քանի որ բոլորս էլ մարդ ենք ու կարիք ունենք ջերմ եւ բարի հարաբերությունների:

Բարի եղեք, քանի որ բարությունն անհրաժեշտ է եւ այն պետք է շատացնել:

Աննա Կարապետյան
հոգեբան-խորհրդատու

երեխաների համար

Ահազանգում





Ի՞նչ պետք է անել, երբ դեպք է պատահել, կա տուժած մարդ, իսկ դուք մենակ եք:

Բարձրաձայն օգնություն կանչեք: Եթե ձեզ արձագանքեն՝ ապա խնդրեք, որ ահազանգեն համապատասխան ծառայություն: Եթե ոչ ոք օգնության չի գալիս, ուրեմն ինքներդ պետք է ահազանգեք եւ արագ վերադառնաք տուժածի մոտ:

Հիշե՛ք, հարկավոր է հնարավորինս շտապ ահազանգել, եթե տուժածը.

- անգիտակից է,
- ունի շնչառության խանգարումներ,
- նշում է ցավեր կրծքավանդակում կամ որովայնում,
- չի շոշափվում անոթազարկը (պուլսը),
- ունի արյունային փսխում,
- թունավորված է,
- ունի ուժեղ նոպայաձեւ գլխացավեր,
- ունի կոտրվածքներ եւ այլն:

Հեռախոսով ահազանգելիս պետք է հերթապահին հաղորդել.

- ի՞նչ է պատահել,
- դեպքի վայրի հասցեն (փողոցը, շենքի համարը, հարկը, բնակարանը),
- տուժածների թիվը, անունը, ազգանունը, տարիքը,
- տուժածների վիճակը,
- ցուցաբերած առաջին օգնությունը,
- ո՞ր հեռախոսահամարից է կատարվում զանգը, զանգահարողի անունը, ազգանունը:

Արագ արձագանքման ծառայություններ

ԱԻՆ Հրշեջ-փրկարար ծառայություն - 911
Ոստիկանություն - 1-02
Շտապ օգնություն - 1-03
Գազի վթարի դեպքում - 1-04
Կենցաղային վթարների դեպքում - 1-08 (Երեւան)

Կլիմայի փոփոխությունը մարդկությանը կդատապարտի ծարավի

El Mundon հայտնում է, որ այսօր արդեն մեկ միլիարդ մարդ ապրում է այնպիսի տարածաշրջաններում, որտեղ խմելու ջուրը դեֆիցիտ է:

«Եթե երկրագնդի միջին ջերմաստիճանն աճի 2 աստիճանով ըստ Ցելսիուսի սանդղակի, ապա ջրի անբավարարվածությունից տառապող մարդկանց թիվը կաճի եւս 8 տոկոսով»,- գրում է լրագրող Թերեզա Հերերոն: «Եթե իրադարձությունները զարգանան վատթարագույն տարբերակով, այն է՝ երկրագնդի ջերմաստիճանն աճի 5 աստիճանով, ապա այդ ցուցանիշը կհասնի մինչեւ 13 տոկոս»:

Թերթը նշում է, որ մոտակա տասնամյակներում ջուրը կդառնա ամենասակավ եւ պահանջված ռեսուրսներից մեկը: Դրա պատճառներն են երկրի բնակչության արագ աճը եւ օդի միջին ջերմաստիճանի բարձրացումը: Համաձայն Կլիմայի ազդեցության հետազոտությունների ինստիտուտի երեք ուսումնասիրությունների՝ առավել խոցելի տարածաշրջաններ են համարվում Հյուսիսային Աֆրիկան, Միջերկրածովյան տարածաշրջանը, Մերձավոր Արեւելքը եւ Ասիան: Ուսումնասիրության արդյունքները հրապարակվել են EARTH SYSTEM DINAMICS գիտական ամսագրում:

Գիտնականները կոչ են անում կառավարություններին գիտակցել հետեւանքները եւ շտապ միջոցներ ձեռնարկել ջերմոցային գազերի արտանետումները կրճատելու ուղղությամբ, ինչպես նաեւ մշակել կլիմայի փոփոխություններին հարմարվելու պլաններ:

Հեղինակը նշում է, որ երկրի ջերմաստիճանի աճը 2 աստիճանով համեմատած ուրիշ կանխատեսումների հետ լավատեսական է:

«Եթե ջերմաստիճանի աճը լինի 3.5 աստիճան ըստ Ցելսիուսի սանդղակի (գիտնականների հավաստմամբ, այդ կանխատեսումը դատապարտված է իրականանալու, եթե ջերմոցային գազերի արտանետումները շարունակվեն ներկայիս հաճախականությամբ), ապա ջրի կարիք ունեցող մարդկանց թիվը կկազմի 11 տոկոս», - ասվում է հոդվածում:



Մյուս հետազոտության համաձայն՝ հնարավոր է երկրագնդի տաքացումը ազդեցություն ունենա էկոհամակարգերի վրա: «Ըստ Ցելսիուսի սանդղակի 3-4 աստիճան գլոբալ տաքացման դեպքում սպասվում է, որ գրեթե կրկնակի կմեծանա այն տարածքների մակերեսը, որտեղ կա էկոհամակարգերի վերափոխման ռիսկ», - նախազգուշացնում է հետազոտության ղեկավար Լիլա Վարշավսկին:

Ըստ գիտնականների՝ 2100 թ. 5 աստիճանով ջերմաստիճանային աճի դեպքում աշխարհում չկա մի այնպիսի տարածք, որտեղ չլինի էկոհամակարգերի էական փոփոխությունների ռիսկ: Ամենափխրուն էկոհամակարգերն արեւելյան Հնդկաստանում են, Եթովպիայի եւ Սոմալիի սավաններում, Ամազոնյան ջունգլիներում, հյուսիսային Կանադայի անտառներում եւ Տիբեթյան լեռնաշխարհում: Օրինակ՝ հյուսիսային անտառները կարող են վերածվել սավանների՝ չափավոր կլիմայով:

Բոլոր այդ փոփոխությունները կանդրադառնան բնակչության բարեկեցության մակարդակի վրա:

Ռուսաստանում ընկած երկնաքարի միջոցով բացահայտված գիսաստղերի գաղտնիքները

Պանորամա շաբաթաթերթը Անջելո Պյեմոնտեզեի հոդվածում ասում է, որ շատ հնարավոր է, որ Չելյաբինսկում ընկած մետեորիտը հանդիսանում էր բեկոր, որը գոյացել էր երկու գիսաստղերի բախման հետեւանքով դեռ երիտասարդ արեգակնային համակարգում միլիոնավոր տարիներ առաջ:



Հրատարակությունը գրում է, որ ինն ամիս անց՝ Չելյաբինսկում 17 մետր տրամագծով գիսաստղի պայթյունից հետո, գիտնականները վերջապես պատմում են այդ երկնային մարմնի կառուցվածքի մասին, որն անջատեց Հիրոսիմայի վրա ընկած 20 ռումբերին հավասարազոր էներգիա:

Միջազգային թիմը, որը բաղկացած էր ռուս, ֆին եւ չեխ գիտնականներից, ամենամյա Ամերիկյան աստղագիտության հասարակության ժողովին ներկայացրեց հետազոտությունների արդյունքները եւ գիսաստղի պատմության մասին արժեքավոր տեղեկատվություն: Ստացված տվյալները ունեն մեծ արժեք այն տեսանկյունից, որ նման իրադարձությունները կարող են կրկնվել, եւ դա թույլ կտա կանխատեսել դրանց հաճախականությունը:

Հոդվածի հեղինակը ընդգծում է, որ բեկորների մեծ մասը ունեն բնութագրեր, որոնք հատուկ են երկրի վրա ընկնող սովորական մետեորիտներին: Դրանք քարեր են, որոնք հիմնականում բաղկացած են քիչ քանակությամբ ծանր մետաղներ (օրինակ երկաթ) պարունակող սիլիկատներից: Այդ պատճառով դրանք ունեն թեթեւ գորշ գույն եւ հստակ տեսանելի են աստղադիտակով:

Բայց ուրիշ նմուշներ խոսում են լրիվ այլ պատմության մասին: Դրանք վկայում են, որ գիսաստղը մինչ երկրի հետ բախումը շատ անգամներ, միլիոնավոր տարիների ընթացքում բախվել է տիեզերքում թափառող գիսաստղերի հետ: Որոշ բեկորներ ունեն մուգ եւ անփայլ գույն ունեցող մետաղական հատիկներ: Իրականացված հետազոտությունները ցույց են տալիս, որ մետաղները, որոնք բախումների հետեւանքով առաջացած բարձր ջերմաստիճանի եւ ճնշման ազդեցությամբ վերափոխվել են հեղուկ վիճակի, թափանցել են քարի կառուցվածք եւ ամրացել:

Հելսինկյան համալսարանից Թոմաս Կոխոուտը նշել է, որ մետեորիտի նմուշները օգնում են մեզ հասկանալ, թե ինչից են բաղկացած մուգ գիսաստղերը, այլ կերպ ասած՝ նրանք, որոնք վատ են արտացոլում լույսը եւ այդ իսկ պատճառով դժվար են հայտնաբերվում: Գիսաստղերի գունավորումը կարող է կախված լինել ածխածնի կամ այլ օրգանական միացությունների պարունակությունից կամ ինչպես Չելյաբինսկի մետեորիտի դեպքում, դրանք կարող են լինել բազմաթիվ բախումների հետեւանք:

2013 թ. Նոբելյան մրցանակը շնորհվել է ֆիզիկայի ոլորտում Հիգսի բոզոնի համար

Պիթեր Հիգսը եւ Ֆրանսուա Էնգլերը 1960-ականներին այն ֆիզիկոսների խմբի մեջ էին, ովքեր բացատրություն տվեցին տարրական մասնիկների ֆիզիկական զանգվածային երեւույթներին:

2013 թ. Նոբելյան մրցանակը ֆիզիկայի ոլորտում տրվել է բրիտանացի գիտնական Պիթեր Հիգսին եւ բելգիացի գիտնական Ֆրանսուա Էնգլերին, ովքեր տեսականորեն հիմնավորել են բոզոնի գոյությունը՝ այն մասնիկները, ի շնորհիվ որոնց տարրական մասնիկները ձեռք են բերում զանգված:

Նրանց կողմից առաջարկված տեսությունը կանխատեսում էր մասնիկների գոյությունը, որը հայտնաբերվեց 2012 թ. CERN-ի (Միջուկային հետազոտությունների եվրոպական խորհուրդ) Մեծ ադրոնային կոլայդերում եւ ստացավ Հիգսի բոզոն անվանումը:

Տեսության մշակմանը, բացի Հիգսից եւ Էնգլերից իրենց մասնակցությունն ունեցան Կառլ Հագենը, Թոմ Քիբբլը եւ Ջերալդ Գուրալնիկը, ինչպես նաեւ Ռոբերտ Բրաուտը, ով մահացավ 2011 թ.:

Լոնդոնի համալսարանական քոլեջի պրոֆեսոր Ռուբեն Սահակյանը վստահ է, որ ֆիզիկոս-փորձագետները Շվեյցարիայում իրոք ֆիքսել են այն մասնիկի գոյությունը, որի մասին խոսում են Հիգսը եւ այլ տեսաբաններ: Նա նաեւ հիշեցրել է, որ տեսաբանների շարքում, ովքեր կանխատեսում էին այդ մասնիկի գոյությունը, կային նաեւ սովետական ֆիզիկոսներ, որոնց թվում՝ Ալեքսանդր Պոլյակովը:

«Այս տարվա մրցանակը նվիրված է մի շատ փոքր բանի, ինչը բացատրում է մնացյալ ամեն ինչ մեր աշխարհում», - ասել է Շվեդիայի Թագավորական գիտությունների ակադեմիայի մշտական քարտուղար Շտաֆան Նորմարկը:

Ֆունդամենտալ գիտությունների արժանիքների ճանաչում

Գործը բարդանում է նրանով, որ ըստ տեսաբանների կանխատեսումների կարող են գոյություն ունենալ Հիգսի բոզոնի տարբեր տիպեր:

Դա պարզագույն ձեւն է, որն ամբողջովին համապատասխանում է տարրական մասնիկների ստանդարտ մոդելին:

Բայց կարող են հայտնաբերվել մասնիկների ավելի էկզոտիկ տարբերակներ, որոնք կհանգեցնեն նոր հեղաշրջման ֆիզիկայում:

Ֆիզիկոս-տեսաբան Ֆրանսուա Էնգլերը, ով մասնագիտացած է ստատիկ ֆիզիկայի, դաշտի քվանտային տեսության, աստղագիտության, լարային տեսության եւ սուպեր գրավիտացիայի ոլորտներում, հայտարարել է, որ շատ ուրախ է մրցանակի համար:

«Սկզբից ես կարծեցի, որ չեմ ստացել մրցանակ, քանզի բաց էի թողել հայտարարությունը»ե, - ասել է նա Ստոկհոլմում,



այն բանից հետո, երբ մամլո ասուլիսը, որի ընթացքում պետք է հայտարարվեր նորությունը, հետաձգվեց ավելի քան մեկ ժամով:

«Ես կցանկանայի շնորհավորել բոլոր նրանց, ովքեր իրենց ներդրումն ունեն այս մասնիկի բացահայտման գործում, եւ նաեւ շնորհակալություն հայտնել իմ ընտանիքի անդամներին, ընկերներին եւ գործընկերներին աջակցության համար», - ասել է էդինբուրգյան համալսարանի պրոֆեսոր Պիթեր Հիգսը:

Նա հավելեց նաեւ, որ ֆունդամենտալ գիտությունների արժանիքների ճանաչումը կնպաստի տեսական հետազոտությունների արժեքի գնահատմանը:

CERN-ի տնօրեն Ռոլֆ Հոյերը հայտնեց իր ուրախությունը, որ Նոբելյան մրցանակի դափնեկիր դարձան տարրական մասնիկների ուսումնասիրությամբ զբաղվող ֆիզիկոսները:

«Հիգսի բոզոնի բացահայտումը նախորդ տարի ՑԵՌՆ-ում, հաստատեց Բրաուտ-Էնգլեր-Հիգսի տեսությունը եւ հասավ իր գագաթնակետին՝ բազում հետազոտությունների պատմության ընթացքում, որտեղ իրենց ներդրումն են ունեցել բազմաթիվ գիտնականներ աշխարհի տարբեր երկրներից»,- ասել է նա:

Դափնեկիրների մրցանակաբաշխության արարողությունը կկայանա դեկտեմբերի 10-ին, Ստոկհոլմում:

արտակարգ ժամանց

Զարմանալի եւ արտառոց զուգադիպություններ

Էդգար Պոյի չարագույժ պատմվածքը

Հայտնի գրող Էդգար Պոն պատմվածք է գրել, որտեղ պատմում է նավաբեկությունից հետո ողջ մնացած անձնակազմի ճակատագրի մասին: Շատ օրեր նրանք փոքրիկ նավակի վրա թափառում են օվկիանոսով մեկ, քանի դեռ սովը նրանց չի ստիպում սպանել եւ ուտել իրենցից մեկին՝ Ռիչարդ Պարկեր անունով տղային:

Մի քանի տարի անց՝ 1884 թվականին, բաց ծովում հայտանբերվեց մակույկ՝ երեք ուղեւորներով: Սակայն պարզվեց, որ ուղեւորները 4-ն են եղել, բայց որոշ ժամանակ անց սովը ստիպել է մեծերին սպանել եւ ուտել տղային, որի անունը կրկին Ռիչարդ Պարկեր էր:

Ողջ մնացածներից ոչ մեկը չգիտեր էդգար Պոյի պատմվածքի մասին:

Ու՞մ մտքով կանցներ

Երբ ամերիկացի տիեզերագնաց Նիլ Արմսթրոնգը առաջին անգամ ոտք դրեց լուսնի վրա, առաջին բանը, որ նա ասաց, հետեւյալն էր. «Հաջողություն են ցանկանում, պարոն Գորսկի»: Եվ ահա, թե ինչ էր դա նշանակում: Երեխա ժամանակ Նիլը պատահաբար լսել էր հարեւանների՝ Գորսկիների ընտանիքի վեճը: Հարեւանուհին բողոքել էր ամուսնուն ասելով. «Հարեւանի տղան ավելի շուտ լուսին կթռչի, քան դու կնոջը կբավարարես»: Եվ ահա քեզ պատահականություն, հարեւան տղան հիրավի հասավ լուսին:

Վեպ, որը կանխատեսել էր «Տիտանիկի» խորտակումը

1898 թվականին Մորգան Ռոբերտսոնը գրեց «Անդունդ» վեպը: Վեպում պատմվում էր «Տիտան» անունով մեծ նավի առաջին եւ վերջին նավարկության մասին: Չնայած նրան, որ նավը համարվում էր մարդկության պատմության ընթացքում ստեղծված ամենահուսալի նավը, այնուամենայնիվ, այն խորտակվում է այսբերգի հետ բախումից հետո եւ իր հետ բազմաթիվ մարդկային կյանքեր է տանում:

Տասներեք տարի անց՝ 1912 թվականին, «Տիտանիկ» նավը, որը համարվում էր բոլոր ժամանակների ամենահուսալի նավը, խորտակվում է այսբերգին բախվելով՝ իր առաջին եւ վերջին ճանփորդության ժամանակ: Վեպը եւ իրականությունը համընկան նույնիսկ մանրուքներով: Ըստ գրքի՝ նավի վրա 3000 ուղեւոր կար, իսկ իրական «Տիտանիկ» նավի վրա՝ 2207, փրկարարական մակույկները գրքում 24-ն էին, իսկ իրականում՝ 20-ը:

Մարկ Տվենը եւ Գալիլեյի գիսաստղը

Հայտնի գրող Մարկ Տվենը ծնվել է 1835 թվականին, այն օրը, երբ երկիր մոլորակի մոտով էր անցնում Գալիլեյի գիսաստղը, եւ մահացել է 1910 թվականին, այն օրը, երբ այն նորից հայտնվեց երկրի ուղեծրի մոտ: Գրողը ինքը դեռ 1909 թվականին կանխատեսել էր իր մահը. «Ես այս աշխարհ եմ եկել Գալիլեյի գիսաստղի հետ եւ հաջորդ տարի նրա հետ էլ կգնամ այս աշխարհից»:

Չարագուշակ երգը

Զարմանալի զուգադիպություն է պատահել իտալացի մեծ դերասան՝ Մարչելլո Մաստրոյաննիի հետ: Մի գեղեցիկ ամառային օր նա հյուր է գնում եւ նստած զրույցի է բռնվում տան տերերի հետ: Հանկարծ, ի զարմանս զրուցակիցների, դերասանը վեր է թռչում տեղից եւ սկսում է մի հին երգ երգել. «Այրվեց այն տունը, որտեղ ես այդքան երջանիկ էի»: Հենց այդ պահին հեռախոսը զանգում է, եւ դերասանի տանեցիները հայտնում են, որ այրվել է Մենտոնում գտնվող նրա շքեղ առանձնատունը: Դերասանը եւ նրա հետ գտնվող մարդիկ ուղղակի ապշած էին: Ավելի ուշ Մարչելլոն խոստովանել է, որ վերջին անգամ այդ երգը երգել է շատ վաղ հասակում եւ դրանից հետո ոչ մի անգամ չի հիշել այն:

Ողջակիզված բնորդուհին

Ֆրանսիացի նկարիչ Ռենե Շարբոնան Ռուանա քաղաքի ղեկավարությունից պատվեր է ստանում նկարելու «Ժաննա դ'Արկը կրակի վրա» կտավը: Նկարի բնորդուհին դառնում է արտաքինով Ֆրանսիայի հերոսուհուն շատ նման մի երիտասարդ ուսանողուհի՝ Ժաննա Լենուան: Կտավը ժամանակին պատրաստ էր: Հաջորդ օրը, երբ նկարը կախեցին քաղաքի ցուցասրահում, համալսարանի լաբորատորիայում, որտեղ սովորում էր բնորդուհին, պայթյուն տեղի ունեցավ: Այդ պահին լաբորատորիայում էր գտնվում նաեւ Ժաննա Լենուան: Երիտասարդ աղջիկը չի կարողանում դուրս գալ կրակի ճիրաններից եւ ողջակիզվում է այնպես, ինչպես նկարի հերոսուհին: Այս ողբերգական դեպքը տեղի է ունեցել 1992 թվականին:

Հաջողակ մանկիկը

1930 թվականին Դետրոյտում անհավանական դեպք է տեղի ունեցել: Ոմն Ջոզեֆ Ֆիգլոկը քայլում էր փողոցով, երբ նրա գիրկը վերեւից նորածին երեխա ընկավ: Պարզվեց, որ երեխան ընկել էր 7-րդ հարկից՝ անպատասխանատու մայրիկի մեղքով: Ոչ Ջոզեֆը, ոչ էլ երեխան չտուժեցին: Բայց ամենաանհավանականը այս պատմության մեջ այն է, որ ուղիղ մեկ տարի հետո, Ջոզեֆ Ֆիգլոկը կրկին անցնում էր հենց այդ փողոցով, երբ նրա վրա կրկին ընկավ հենց այդ երեխան: Եվ էլի ամենինչ բարեհաջող ստացվեց՝ առանց զոհերի:

Ճակատագրական կիմանոն

17-րդ դարում Ճապոնիայում զարմանալի պատմություն է տեղի ունեցել, եւ գլխավոր դերը կատարել է սովորական մանկական կիմանոն: Բոլոր երեք անչափահաս երեխաները, որոնց նվիրել էին այդ չարաբեր կիմանոն, մահացել էին՝ դեռեւս չհասցնելով այն հագնել: Շուտով քաղաքում այդ կիմանոյի շուրջ սկսեցին խոսակցություններ պտտվել: 1657 թվականին քաղաքի քահանան որոշում է կանխել հետագա չարաբաստիկ իրադարձությունները եւ կիմանոն վառել: Հազիվ էր նա հասցրել կրակը վառել, երբ ուժեղ քամի բարձրացավ, եւ կրակը հզորանալով դուրս եկավ վերահսկողությունից: Քահանայի խիզախ քայլի հետեւանքները եղան անկանխատեսելի եւ ողբերգական. այդ հրդեհից այրվեց Տոկիոյի է-ը, ոչնչացվեց 300 վանք, 500 պալատ, 9000 խանութ, 61 կամուրջ, զոհվեց 100 000 մարդ:

Ու՞մից եւ ի՞նչի համար էր վրեժ լուծում կիմանոն...

Ֆիլմի օդապարիկը՝ հյուր

Շոտլանդական գյուղի բնակիչները տեղի կինոթատրոնում դիտում էին «Աշխարհի շուրջը 80 օրում» ֆիլմը: Այն պահին, երբ ֆիլմի հերոսները բարձրանում են օդապարիկի զամբյուղ, եւ օդապարիկի սկսում է վեր բարձրանալ, տարօրինակ ուժեղ հարված է զգացվում կինոթատրոնի տանիքին: Պարզվում է, որ կինոթատրոնի տանիքին հենց այնպիսի օդապարիկ է ընկել, ինչպիսին ֆիլմում է: Այս դեպքը տեղի է ունեցել 1965 թվականին:



§²ñï³Ï³ñ·Ã»ñÃ¦
ß³µ³Ã³Ã»ñÃÇ
ÑÇÙÝ³¹Çñ »ð Ññ³ï³ñ³ÏÇã
§²ñï³Ï³ñ· ³ÉÇù¦ êäÀ

îÝûñ»Ý »ð ·ÉË³íáñ ËÙµ³·Çñ`
ÜáõÝ» ¶ñÇ·áõÙ³Ý

ÊÙµ³·ñÇ ï»Õ³Ï³É`
²í³. º÷ñ»ÙÙ³Ý
Ò»ð³íáñáÕ`
Ð³ëÙÇÏ ²µ»ÉÙ³Ý

ºñ»ð³Ý, ²×³éÙ³Ý 1
Ð»é. 24 24 22
E - mail: tert@emergency.am
info@mes.am

îå³·ñí³Í¿ §îÇ·ñ³Ý Ø»Í¦ Ññ³ï³ñ³ÏáõÃÙ³Ý
ïå³ñ³ÝáõÙ` ²ñß³ÏáõÝÙ³ó 2
Ì³í³ÉÁ` 2 ïå³·ñ³Ï³Ý Ù³ÙáõÉ
ä³ïí»ñ` 435, ·ñ³ÝóÙ³Ý í Ï³µ³Ï³Ý` 1074,
ïå³ù³Ý³ÏÁ` 5262 ûñÇÝ³Ï:
Ստորագրված է տպագրության
24.10.2013 թ.